# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 1 - Ն

## 2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ավագանու հաստատմանն է ներկայացնում 2019թ. տարեկան բյուջեի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1. Հաստատել Դդմաշեն համայնքի 2019թ. տեղական բյուջեն՝**

Եկամուտների մասով – 63.000,0 հազար դրամ
Ծախսային մասով – 78.567,0 հազար դրամ
Դեֆիցիտը – 15.567,5 հազար դրամ

1.1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը գումարով 15.567,5 հազար դրամ ուղղել 2019 թ. համայնքի ֆոնդային բյուջեի դեֆիցիտի ծածկմանը:

**2. Հաստատել տեղական բյուջեն վարչական մասով՝**

Եկամուտների մասով – 63.000,0 հազար դրամ
Ծախսային մասով – 63.000,0 հազար դրամ

**3. Հաստատել ֆոնդային բյուջեն՝**

Եկամուտների մասով – 0 դրամ
Ծախսային մասով – 15.567,5 հազար դրամ
Դեֆիցիտը – 15.567,5 հազար դրամ

### Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ

| ՏՈՂԻ N | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | ԸՆԴԱՄԵՆԸ /հազ. դրամ |
|---|---|---|
| **1000** | **Ընդամենը եկամուտներ /Վարչական բյուջե/** | **63000.0** |
| **1100** | **1. Հարկեր և տուրքեր** | **15543.5** |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝ | 8486.5 |

| | | |
|---|---|---|
| 1111 | Գույքահարկ՝ համայքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 209.0 |
| 1112 | Հողի հարկ՝ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 8277.5 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ | 6757.0 |
| 1121 | Գույքահարկ՝ փոխադրամիջոցների համար | 6757.0 |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործնեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝ | 300.0 |
| 1131 | Տեղական տուրքեր | 300.0 |
| 1132 | ա/ Համայքի տարածքում նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարություն /տեղադրման/ թույլտվության համար, այդ թվում՝ | - |
| 1133 | ա/ հիմնական շինությունների համար | - |
| 1136 | բ/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | - |
| 1137 | գ/ Համայքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտ. համար | 100.0 |
| 1139 | դ/ Համայնքի տարածքում հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | 200.0 |
| **1200** | **2. Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝** | **45256.5** |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝ | 45256.5 |
| 1251 | ա/ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 45256.5 |
| 1257 | գ/ Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ | - |
| **1300** | **3. Այլ եկամուտներ, այդ թվում՝** | **2200.0** |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝ | 1000.0 |
| 1331 | Համայքի սեփականություն համարվող հողերի վարձ. վարձավճարներ | 1000.0 |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | - |
| 1340 | 3.4 Համայքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | - |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | - |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, այդ թվում՝ | 1200.0 |
| 1351 | Տեղական վճարներ, այդ թվում՝ | |
| | մրցույթների աճուրդների մասնակցության վճար | - |
| 1353 | Աղբահանության վճար | 1200.0 |
| | **Բ.Ֆոնդային բյուջեի եկամուտներ** | **-** |
| | ն/թ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում | - |

## Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

| **գործ. դաս.** | **Բյուջետային ծախսերի անվանումները** | **հազ. դրամ** |
|---|---|---|
| **խումբ. ենթախ** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **63000.0** |
| **01.1.0** | **1.Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում. ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ. արտաքին հարաբերություններ** | **30325.0** |
| | որից՝ | |
| **01.1.1** | **Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում** | **30325.0** |
| | այդ թվում՝ | |
| | 4111 - Աշխատավարձ | 22000.0 |
| | 4112 - Պարգևավճար | - |
| | 4211 – Գործառնական և բանկային ծառայություններ | 50.0 |
| | 4212 - Էներգետիկ ծառայություն | 4000.0 |
| | 4214 - Կապի ծառայություն | 62.0 |

| | | |
|---|---|---|
| | 4215 - Ապահովագրական ծախսեր | 45.0 |
| | 4221 - Ներքին գործուղումներ | 200.0 |
| | 4232 - Համակարգչային ծառայություններ | 200.0 |
| | 4234 - Տեղեկատվական ծառայություններ | 288.0 |
| | 4235 - Կառավարչական ծառայություն | 600.0 |
| | 4241 - Մասնագիտական ծառայություններ | 200.0 |
| | 4252 – Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 530.0 |
| | 4261 - Գրասենյակային նյութեր և հագուստ | 500.0 |
| | 4264 - Տրանսպորտային նյութեր | 500.0 |
| | 4267 - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 500.0 |
| | 4823 - Պարտադիր վճարներ | 650.0 |
| **01.6.1** | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերի չպատկանող/, այդ թվում՝** | **1250.0** |
| | 4234 - Տեղեկատվական ծառայություններ | 400.0 |
| | 4235 - Իրավաբանական ծառայություն | 300.0 |
| | 4241 - Մանագիտական ծառայություններ | 200.0 |
| | 4269 - Հատուկ նպատակային նյութեր | 350.0 |
| **04.5.1** | **Ճանապարհային տրանսպորտ, այդ թվում՝** | **1800.0** |
| | 4251 - Ներհամայնքային ճանապարհի ընթացիկ վերանորոգում | 900.0 |
| | 4264 - Դիզելային վառելիք | 900.0 |
| **05.0.0** | **Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝** | **3200.0** |
| | Աղբահեռացում, որից՝ | |
| 05.1.1. | 4213 - Աղբահեռացում /սանիտարական մաքրում/ | 1300.0 |
| 05.2.1 | 4213 - Կեղտաջրերի հեռացում | 900.0 |
| 05.3.1 | 4213 – Սանիտարական մաքրում | 1000.0 |
| **06.0.0** | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում՝** | **1850.0** |
| | Ջրամատակարարում, որից՝ | |
| 06.3.1 | 4251 - Ջրամատակարարման ցանցի ընթացիկ վերանորոգում | 900.0 |
| 06.4.1 | Փողոցային լուսավորության ցանցի պահպանում, այդ թվում՝ | |
| | 4269 - Հատուկ նպատակային նյութեր | 950.0 |
| **08.0.0** | **Հանգիստ, մշակույթ և կրոն, այդ թվում՝** | **800.0** |
| | Մշակութային տներ և ակումբներ | |
| 08.2.3 | 4269 - Հատուկ նպատակային նյութեր | 700.0 |
| | Քաղաքական կուսակցություններ, Հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ | |
| 08.4.2 | 4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին /հասարակական կազմակերպություններ, արհմիություններ/ | 100.0 |
| **09.1.0** | **Նախադպրոցական կրթություն, այդ թվում՝** | **21293.0** |
| 09.1.1 | 4511 - Սուբսիդիաներ «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 212923.0 |
| **10.0.0** | **Սոցիալական պաշտպանություն, այդ թվում՝** | **1900.0** |
| 10.3.1 | 4726 - Հուղարկավորության նպաստներ | 1200.0 |
| 10.4.1 | 4722 - Մայրության նպաստներ | - |
| 10.7.1 | 4729 - Այլ նպաստներ բյուջեից | 700.0 |
| **11.1.2** | **Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ, այդ թվում՝** | **582.0** |
| | համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատ հատկացումներ | |
| | **Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր** | **15567.5** |
| | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն** | **15567.5** |
| 01.1.1 | 5122 - Վարչական սարքավորումներ | 700.0 |
| 01.1.1 | 5132 - Ոչ նյութական հիմնական միջոցներ | 500.0 |
| 06.4.1 | 5113 - Փողոցային լուսավորություն | 14367.5 |

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Թադևոսյան Գառնիկ

3. Կիրակոսյան Հրահատ

4. Հովհաննիսյան Գուրգեն

5. Ղարիբյան Էդիկ

6. Մելքոնյան Ջավեն

7. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 2

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2008-2018Թ.Թ. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ, ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ, ԱՐՈՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ 2019-2023 Թ.Թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԻ ԵՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 39 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել համայնքի 2008-2018թ.թ. հողի հարկի ապառքների 2019-2023թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2019թ. – 693.8
2020թ. – 1777.8
2021թ. - 1777.8
2022թ. – 1777.8
2023թ. - 1778.0

**ԸՆԴԱՄԵՆԸ – 7805.2 հազար դրամ**

2. Հաստատել համայնքի գույքահարկի ապառքների 2019-2023թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2019թ. – 600.0
2020թ. – 1025.9
2021թ. – 1025.9
2022թ. – 1025.9
2023թ. - 1025.9

**ԸՆԴԱՄԵՆԸ – 4703.6 հազ. դրամ**

3. Հաստատել համայնքի հողի վարձավճարի ապառքների 2019-2023թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2018թ. – 200.0

**ԸՆԴԱՄԵՆԸ – 200.0 հազար դրամ**

4. Հաստատել համայնքի արոտների վարձավճարի ապառքների 2019-2023թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2019թ. – 50.0

**ԸՆԴԱՄԵՆԸ – 50.0 հազար դրամ**

5. Հաստատել Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկի ապառքների 2019-2023թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2019թ. – 32.0
2020թ. – 127.2
2021թ. – 127.1
2022թ. – 127.1
2023թ. – 128.7

**ԸՆԴԱՄԵՆԸ – 542.1 հազ. դրամ**

6. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 39 որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Թադևոսյան Գառնիկ

3. Կիրակոսյան Հրահատ

4. Հովհաննիսյան Գուրգեն

5. Ղարիբյան Էդիկ

6. Մելքոնյան Զավեն

7. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 3

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի ավագանու հաստատմանն է ներկայացվում Դդմաշեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Դդմաշեն համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան
2. Թադևոսյան Գառնիկ
3. Կիրակոսյան Հրահատ
4. Հովհաննիսյան Գուրգեն
5. Ղարիբյան Էդիկ
6. Մելքոնյան Զավեն
7. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 4 - Ն

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2018թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Դդմաշեն համայնքի բյուջեն կատարվել է.
1/ Ընդամենը եկամուտներ – 100.4 %
2/ Սեփական եկամուտներ – 101.5 %

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Դդմաշեն համայնքի 2018թ. բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները՝ կցվում է:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Հովհաննիսյան Գուրգեն

3. Ղարիբյան Էդիկ

4. Մելքոնյան Զավեն

5. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 5

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Հովհաննիսյան Գուրգեն

3. Ղարիբյան Էդիկ

4. Մելքոնյան Զավեն

5. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 6

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար առաջնահերթ խնդիր է արարողությունների սրահի հիմնանորոգման ծրագիրը: Արարողությունների սրահի հիմնանորոգումը կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ (մոտ 50 մլն), ուստի նպատակահարմար է այն իրականացնել 2 փուլով: Առաջին փուլում նախատեսվում է տանիքի, լուսամուտների, դռների և միջնորմների քանդում, շինարարական աղբի հավաքում և տեղափոխում, առաստաղի բարձրացում, տանիքի հավաքում, լուսամուտների և դռների տեղադրում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի զարգացման ծրագիրը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին մասնակցելու համար ներկայացնել հայտ՝ Արարողությունների սրահի հիմնանորոգման 1-ին փուլի համար:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին վերը նշված գործընթացը կազմակերպել օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Հովհաննիսյան Գուրգեն

3. Ղարիբյան Էդիկ

4. Մելքոնյան Զավեն

5. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 7

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը, որից վարելահող՝ 129.91 հա, խոտհարք՝ 123.47 հա, արոտ՝ 1900.9 հա և այլ հողատեսք՝ 485.56 հա օգտագործման տրամադրել վարձակալությամբ:

2. Հանձնարարել Դդմաշեն համայնքի՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթային հանձնաժողովին, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի, խոտհարքների, արոտների և այլ հողատեսքերի վարձակալությամբ օգտագործման տրամադրելու համար սահմանված կարգով հայտարարել մրցույթ հետևյալ պայմաններով.

| Հ/Հ | Հողամասի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Ծածկագիրը | Հողամասի կարգը | Հողամասի չափը /հա/ | 1 հա մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Վարձակալության /օգտագործման/ ժամկետը |
| 1. | Գյուղատնտեսական | Վարելահող | 05-030-0219-<br>05-030-0222-<br>05-030-0227-0176<br>05-030-0270-0080<br>05-030-0274-0074 | III կարգ | 41.5 | 6500 | 10 տարի |
| | | | 05-030-0219-<br>05-030-0219-0070<br>05-030-0219-0095<br>05-030-0224-0007<br>05-030-0250-0024<br>05-030-0250-0028<br>05-030-0260-0097<br>05-030-0265-0052 | IV կարգ | 18.0 | 4000 | 10 տարի |
| | | | 05-030-0219-<br>05-030-0222- | V կարգ | 70.41 | 2000 | 10 տարի |
| 2. | Գյուղատնտեսական | Խոտհարք | 05-030-0201-0018<br>05-030-0201-0031<br>05-030-0201-0038 | II կարգ | 114.75 | 5000 | 10 տարի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 05-030-0201-0039<br>05-030-0202-0007<br>05-030-0202-0009<br>05-030-0202-0010<br>05-030-0202-0013<br>05-030-0202-0066<br>05-030-0204-0054<br>05-030-0205-0008<br>05-030-0206-0023<br>05-030-0206-0024<br>05-030-0206-0025<br>05-030-0206-0063<br>05-030-0206-0094<br>05-030-0206-0095<br>05-030-0206-0097<br>05-030-0207-0022<br>05-030-0212-0010<br>05-030-0212-0068<br>05-030-0213-0031<br>05-030-0213-0033<br>05-030-0213-0046<br>05-030-0214-0006<br>05-030-0214-0013<br>05-030-0214-0014<br>05-030-0214-0021<br>05-030-0214-0027<br>05-030-0215-0008<br>05-030-0217-0050<br>05-030-0217-0055<br>05-030-0217-0077<br>05-030-0217-0080<br>05-030-0218-0004<br>05-030-0260-0097<br>05-030-0261-0052 | | | | |
| 3. | Գյուղատնտեսական | Արոտ | 05-030-0201-<br>05-030-0202-<br>05-030-0204-<br>05-030-0205-<br>05-030-0206-<br>05-030-0207-<br>05-030-0209-<br>05-030-0210-<br>05-030-0214-<br>05-030-0219-<br>05-030-0220-<br>05-030-0221-<br>05-030-0222-<br>05-030-0223- | II կարգ | 1956.77 | 4500 | 10 տարի |
| 4. | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | | | 485.56 | 4500 | 10 տարի |

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան
2. Հովհաննիսյան Գուրգեն
3. Ղարիբյան Էդիկ
4. Մելքոնյան Զավեն
5. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 8

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով են դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Ժուլետա Ասիլբեկի Մինասյանը, Մարիամ Գարսևանի Գևորգյանը, Նաիրա Նիկոլայի Ավագյանը, Քրիստինե Շավարշի Աղաջանյանը և Մարուսյա Գուրգենի Հովհաննիսյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումների հիման վրա քաղաքացիների տնտեսություններում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.

1/ Մարիամ Գարսևանի Գևորգյանին – 20.000 /քսան հազար/ դրամ
2/ Նաիրա Նիկոլայի Ավագյանին – 20.000 /քսան հազար/ դրամ
3/ Քրիստինե Շավարշի Աղաջանյանին – 20.000 /քսան հազար/ դրամ
4/ Մարուսյա Գուրգենի Հովհաննիսյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ
5/ Ժուլետա Ասիլբեկի Մինասյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ
**ԸՆԴԱՄԵՆԸ - 120.000 /հարյուր քսան հազար/ դրամ**

2. Աշխատակազմի գլխավոր մասնագետին - սույն որոշումն ընդունել ի գիտություն և կատարել համապատասխան գործարքներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Հովհաննիսյան Գուրգեն

3. Ղարիբյան Էդիկ

4. Մելքոնյան Զավեն

5. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 9

### «ԴԴՄԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դդմաշեն համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ «Դդմաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ ՀՈԱԿ/՝ տնօրենի թեկնածությանն համաձայնություն տալու մասին որոշման նախագիծը: ՀՈԱԿ-ի տնօրեն Էմմա Ոսկանյանը 2019 թվականի փետրվարի 20-ից գտնվելու է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված նպատակային արձակուրդում /մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ/:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նարինե Ալբերտի Հարությունյանին «Դդմաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /ՀՈԱԿ/ տնօրեն նշանակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2019թվականի N 10

## «ԴԴՄԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դդմաշեն համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկութունը՝ «Դդմաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ ՀՈԱԿ/՝ տնօրենի թեկնածությանն համաձայնություն տալու մասին որոշման նախագիծը:

ՀՈԱԿ-ի տնօրեն Էմմա Ոսկանյանը 2019 թվականի փետրվարի 20-ից գտնվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված նպատակային արձակուրդում /մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ/: Է. Ոսկանյանին փոխարինում էր Նարինե Ալբերտի Հարությունյանը, սակայն, վերջինս աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Մերի Արսենի Մկրտչյանին «Դդմաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2019թվականի N 11

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով են դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Հովհաննես Վարազդատի Սաֆարյանը, Հասմիկ Գառնիկի Ղարիբյանը և Սվետլան Գարուշի Հակոբյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումների հիման վրա քաղաքացիների տնտեսություններում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.

1/ Հովհաննես Վարազդատի Սաֆարյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ
2/ Հասմիկ Գառնիկի Ղարիբյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ
3/ Սվետլանա Գարուշի Հակոբյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ

**ԸՆԴԱՄԵՆԸ - 90.000 /իննսուն հազար/ դրամ**

2. Աշխատակազմի գլխավոր մասնագետին - սույն որոշումն ընդունել ի գիտություն և կատարել համապատասխան գործարքներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 12

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԴԴՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետին դրամական օգնության խնդրանքով է դիմել /դիմումի մուտքագրման ամսաթիվ և համար՝ 01.04.2019թ., ՆՄ-4686-2019/ Դդմաշեն համայնքի բնակչուհի Նազելի Խաչատրյանը: Վերը նշված դիմումը Գեղարքունիքի մարզպետարանի կողմից վերահասցեագրվել է Դդմաշենի համայնքապետարանին /մտից ամսաթիվ՝ 15.04.2019թ./:

2019 թվականի Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական պաշտպանության ծախսերի նախահաշվի /խումբ 10.7.1/ սոցիալապես անապահով անձանց աջակցություն 4729 հոդվածով նախատեսվել է 700.0 հազար դրամ, որը տրամադրվում է հիմնականում առողջական խնդիրներ ունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների՝ զինծառայության մեկնող անձանց: Նախատեսված 700.0 հազար դրամից արդեն ծախսվել է 250.0 հազար դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով և հաշվի առնելով Դդմաշենի համայնքապետարանի ֆինանսական միջոցների սղությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշենի համայնքապետարանը չունի հնարավորություն՝ Նազելի Խաչատրյանին ուսման վարձի մուծման նպատակով դրամական օգնություն տալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 13

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի՝ Դդմաշեն համայնքի 1 փողոց, 95 հասցեի 05-030-0292-0002 կադաստրային ծածկագրով 3436,4 քմ /0.34364 հա/ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 765.000 /յոթ հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 14 - Ն

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2019թ. տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի վարչական բյուջեի նախադպրոցական կրթության ծախսերի նախահաշվի /խումբ 09.1.1/ սուբսիդիաների 4511 հոդվածից պակասեցնել պակասեցնել 500.0 հազար դրամ, և այն հաստատել 20793.0 հազար դրամ:

2/ Համայնքի վարչական բյուջեի բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ծախսերի նախահաշվի /խումբ 07.1.1/ սուբսիդիաների ծախսերի 4511 հոդվածին ավելացնել 500.0 հազար դրամ, և այն հաստատել 500.0 հազար դրամ:

2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի ֆոնդային բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ ոչ նյութական հիմնական միջոցների 5132 հոդվածից պակասեցնել 200.0 հազար դրամ, և այն հաստատել 300.0 հազար դրամ:

2/ Համայնքի ֆոնդային բյուջեի բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 06.4.1/ փողոցային լուսավորում 5113 հոդվածից պակասեցնել 580.0 հազար դրամ, և այն հաստատել 13787.5 հազար դրամ:

3/ Համայնքի ֆոնդային բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 01.6.1/ նախագծահետազոտական ծախսերի 5134 հոդվածին ավելացնել 780.0 հազար դրամ, և այն հաստատել 780.0 հազար դրամ:

| Տողի N | Ծախսերի անվանումները | նախ. ցուցա-նիշները | նախ. կատարված փոփոխութ-յունները | Սույն նախ. հաստատվող ցուցանիշները |
|---|---|---|---|---|
| **ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ** | | | | |
| **09.1.1** | **Նախադպրոցական կրթություն** | **21293.0** | **-500.0** | **20793.0** |
| | 4511 - Սուբսիդիաներ | **21293.0** | **-500.0** | **20793.0** |
| **07.1.1** | Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ | - | **+500.0** | **500.0** |
| | 4511 - Սուբսիդիաներ | - | **+500.0** | **500.0** |
| **ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ** | | | | |
| **01.1.1** | **Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառա վարում** | **1200.0** | **-200.0** | **1000.0** |
| | 5132 – ոչ նյութական հիմնական միջոցներ | 500.0 | -200.0 | 300.0 |
| **01.6.1** | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **-** | **+780.0** | **780.0** |
| | 5134 - նախագծահետազոտական ծախսեր | - | +780.0 | 780.0 |
| **06.0.0** | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայու թյուններ** | **14367.5** | **-580.0** | **13787.5** |
| 06.4.1 | Փողոցների լուսավորում | 14367.5 | -580.0 | 13787.5 |
| | 5113 – փողոցների լուսավորման հիմնանորոգում | 14367.5 | -580.0 | 13787.5 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 15

## ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԴԴՄԱՇԵՆՑԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվեց Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված Սամվել Դավթի Գրիգորյանի ու Սիմոն Մարսելի Սիմոնյանի ընտանիքներին Մայիսյան հաղթանակների առթիվ դրամական օգնություն տալու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մայիսյան հաղթանակների առթիվ համայնքի սոցիալական այլ ծրագրերի /10.07.01/ 4729 հոդվածից տալ դրամական օգնություն Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված.

1/ Սամվել Դավթի Գրիգորյանի ընտանիքին – 50.000 /հիսուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել զոհվածի այրուն՝ Թերեզա Վահանի Մանուկյանին:

2/ Սիմոն Մարսելի Սիմոնյանի ընտանիքին – 50.000 /հիսուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել զոհվածի հորը՝ Մարսել Սարիբեկի Սիմոնյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 16

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին քննարկեց Դդմաշեն համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվա առթիվ, հայրենիքին մատուցած ծառայությունների, ինչպես նաև մատաղ սերնդի կրթության ու դաստիարակման գործում ունեցած մեծ վաստակի համար Հայրենական մեծ պատերազմի մասնակից, վետերան, ծնունդով դդմաշենցի **Գագիկ Բալոյի Եղիազարյանին** *շնորհել* **Դդմաշեն համայնքի պատվավոր քաղաքացու կոչում**:

2. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվա առթիվ Գագիկ Բալոյի Եղիազարյանին, որպես պարգև, տալ 100.000 /հարյուր հազար/ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Ջավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 17

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման պահանջները և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահի 2005 թվականի մայիսի 31-ի N 143-Ն հրամանով հաստատված հրահանգի /Հավելված N1/պահանջները.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի հողային հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 18

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի՝ Դդմաշեն համայնքի 6 փողոց, 2/1 հասցեի 05-030-0062- կադաստրային ծածկագրով 242 քմ /0.0242 հա/ մակերեսով բնակավայրի անհատական բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 54.000 /հիսունչորս հազար/ ՀՀ դրամ:

2. Համաձայնել Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի՝ 05-030-0274-0001 կադաստրային ծածկագրով 9216.77 քմ /0.921677 հա/ մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 555.000 /հինգ հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

3. Հանձնարարել Դդմաշեն համայնքի ղեկավարին - օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցկացնել հողամասերի աժուրդ-վաճառք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 19

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով են դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Արման Սամվելի Ղազարյանը, Սուրեն Համբարձումի Հովհաննիսյանը և Սաշիկ Գարեգինի Սողոմոնյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումների հիման վրա քաղաքացիների տնտեսություններում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Համայնքի ավագանու նախաձեռնությամբ և ավագանու անդամների մասնակցությամբ կատարվել է տնային այցելություն՝ ուսումնասիրություն Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչ Աշոտ Պարգևի Սուքայանի տնտեսությունում: Այցելության ժամանակ պարզվեց, որ Աշոտ Սուքայանի կինը և որդին ունեն առողջական շատ լուրջ խնդիրներ և ունեն օգնության խիստ կարիք:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.

1/ Արման Սամվելի Ղազարյանին – 20.000 /քսան հազար/ դրամ

2/ Սուրեն Համբարձումի Հովհաննիսյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ

3/ Սաշիկ Գարեգինի Սողոմոնյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ

**ԸՆԴԱՄԵՆԸ - 80.000 /ութսուն հազար/ դրամ**

2. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչ Աշոտ Պարգևի Սուքասյանին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն – 50.000 /հիսուն հազար/ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 20 - Ն

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2019թ. տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի վարչական բյուջեյի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի վարչական բյուջեի նախադպրոցական կրթության ծախսերի նախահաշվի /խումբ 09.1.1/ սուբսիդիաների 4511 հոդվածից պակասեցնել 2396.370 հազար դրամ, և այն հաստատել 18396.630 հազար դրամ:

2/ Համայնքի վարչական բյուջեի բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ծախսերի նախահաշվի /խումբ 06.3.1/ ջրամատակարարման 4251 հոդվածից պակասեցնել 660.0 հազար դրամ, և այն հաստատել 240.0 հազար դրամ:

3/ Համայնքի վարչական բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ ապարատի պահպանման ծախսերի պարգևավճարների 4112 հոդվածին ավելացնել 1775.0 հազար դրամ, և այն հաստատել 1775.0 հազար դրամ:

4/ Համայնքի վարչական բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ ապարատի պահպանման ծախսերի մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման 4252 հոդվածին ավելացնել 30.0 հազար դրամ, և այն հաստատել 560.0 հազար դրամ:

5/ Համայնքի վարչական բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ ապարատի պահպանման ծախսերի գրասենյակային ապրանքների և նյութերի 4261 հոդվածին ավելացնել 50.0 հազար դրամ, և այն հաստատել 550.0 հազար դրամ:

6/ Համայնքի վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 01.6.1/ մասնագիտական ծառայությունների 4241 հոդվածին ավելացնել 660.0 հազար դրամ, և այն հաստատել 860.0 հազար դրամ:

7/ Համայնքի վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 01.6.1/ հատուկ նպատակային նյութերի 4269 հոդվածին ավելացնել 365.0 հազար դրամ, և այն հաստատել 764.0 հազար դրամ:

8/ Համայնքի վարչական բյուջեի հանգիստ, մշակույթ, կրոն ծախսերի նախահաշվի /խումբ 08.2.3/ հատուկ նպատակային նյութերի 4269 հոդվածին ավելացնել 176370 դրամ, և այն հաստատել 949370 դրամ:

2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի ֆոնդային բյուջեի բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 06.4.1/ փողոցային լուսավորում 5113 հոդվածից պակասեցնել 13787.5 հազար դրամ, և այն հաստատել 0 դրամ:

2/ Համայնքի ֆոնդային բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 01.6.1/ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծախսերի հանդիսությունների սրահի կապիտալ վերանորոգման 5113 հոդվածին ավելացնել 13787.5 հազար դրամ, և այն հաստատել 13787.5 հազար դրամ:

| Տողի N | Ծախսերի անվանումները | նախ. ցուցա-նիշները | նախ. կատարված փոփոխութ-յունները | Սույն նախ. հաստատվող ցուցանիշները |
|---|---|---|---|---|
| **ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ** | | | | |
| **01.1.1** | **Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում** | **29776.0** | **+1855.0** | **31631.0** |
| | **4112 – Պարգևավճարներ** | **-** | **+1775.0** | **1775.0** |
| | **4252 - Մ**եքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | **530.0** | **+30.0** | **560.0** |
| | **4261 -** Գրասենյակային ապրանքներ և նյութեր | **500.0** | **+50.0** | **550.0** |
| **01.6.1** | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **1299.0** | **+1025.0** | **2324.0** |
| | 4241 – Մասնագիտական ծառայություններ | 200.0 | +660.0 | 860.0 |
| | 4269 – Հատուկ նպատակային նյութեր | 399.0 | +365.0 | 764.0 |
| **06.3.1** | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառա-յություններ** | **1850.0** | **-660.0** | **1190.0** |
| | 4251 – Ջրամատակարարում | 900.0 | -660.0 | 240.0 |
| **08.0.0** | **Հանգիստ, մշակույթ, կրոն** | **873.0** | **+176,370** | **1049,370** |
| **08.2.3** | 4269 – Հատուկ նպատակային նյութեր | **773.0** | **+176,370** | **949,370** |
| **09.1.1** | **Նախադպրոցական կրթություն** | **20793.0** | **-2396,370** | **18396,630** |
| | 4511 - Սուբսիդիաներ | **20793.0** | **-2396,370** | **18396,630** |
| **ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ** | | | | |
| **01.6.1** | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | - | **+13787.5** | **13787.5** |
| | 5113 - Հանդիսությունների սրահի կապիտալ վերանորոգում | - | **+13787.5** | **13787.5** |
| **06.0.0** | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառա-յություններ** | **13787.5** | **-13787.5** | - |
| 06.4.1 | Փողոցների լուսավորում | **13787.5** | **-13787.5** | - |
| | 5113 – փողոցների լուսավորման հիմնանորոգում | **13787.5** | **-13787.5** | - |

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 21

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ» N3 եզրակացությունը, Դդմաշեն համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 11 որոշումը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող 05-030-0285- կադաստրային ծածկագրով 2338 քմ /0.2338 հա/ մակերեսով անտառային հողամասը փոխադրել <u>նպատակային նշանակությունը</u>՝ բնակավայրերի, <u>գործառնական նշանակությունը</u>՝ հասարակական կառուցապատման՝ համաձայն համայնքի գլխավոր հատակագծի:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող 05-030-0285- կադաստրային ծածկագրով 180.6 քմ /0.01806 հա/ մակերեսով անտառային հողամասը փոխադրել <u>նպատակային նշանակությունը</u>՝ բնակավայրերի, <u>գործառնական նշանակությունը</u>՝ հասարակական կառուցապատման՝ համաձայն համայնքի գլխավոր հատակագծի:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող 05-030-0219- կադաստրային ծածկագրով 7623 քմ /0.7623 հա/ մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտը և 3140 քմ /0.3140 հա/ մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել - <u>նպատակային նշանակությունը</u>՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, <u>գործառնական նշանակությունը</u>՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ համաձայն համայնքի գլխավոր հատակագծի:

4. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները ներառել համայնքի հերթապահ էլեկտրոնային քարտեզում և ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 22

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ <<ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ>> ԱՌԹԻՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵՑՆԵՐԻՆ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Դդմաշեն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 25 որոշմամբ հաստատված կարգով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տարեցների միջազգային օրվա առթիվ Դդմաշեն համայնքի 90 և ավել տարեկան /մինչև 31.12.1929թ. ծնված/ տարեցներին տալ հուշանվերներ, համաձայն կից ցուցակի:

2. Թույլատրել Դդմաշեն համայնքի ղեկավարին համայնքի վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 01.6.1/ հատուկ նպատակային նյութերի 4269 հոդվածից 260.0 հազար դրամ ուղղել հուշանվերներ ձեռք բերելու համար:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին տալ համապատասխան հանձնարարականներ օրենքով սահմանված կարգով գործընթացը կազմակերպելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 23

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով են դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Մարիամ Արգամի Մկրտչյանը, Ամալյա Հակոբի Գևորգյանը, Վարդան Սուրենի Անդրեասյանը և Գագիկ Մարտունու Ավագյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումների հիման վրա քաղաքացիների տնտեսություններում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.

1/ Մարիամ Արգամի Մկրտչյանին – 20.000 /քսան հազար/ դրամ
2/ Ամալյա Հակոբի Գևորգյանին – 20.000 /քսան հազար/ դրամ
3/ Վարդան Սուրենի Անդրեասյանին - 20.000 /քսան հազար/ դրամ
4/ Գագիկ Մարտունու Ավագյանին – 30.000 /երեսուն հազար/ դրամ

**ԸՆԴԱՄԵՆԸ - 90.000 /իննսուն հազար/ դրամ**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Ջավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 24

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N21 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N21 որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող 05-030-0219- կադաստրային ծածկագրով 6796.98 քմ /0.679698 հա/ մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտը և 183.02 քմ /0.018302 հա/ մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել - նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ համաձայն համայնքի գլխավոր հատակագծի: >>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6      Դեմ -0      Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝      Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 25 - Ն

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2019թ. տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի սոցիալական պաշտպանության ծախսերի նախահաշվի /խումբ 10.3.1/ հուղարկավորության նպաստների 4726 հոդվածից պակասեցնել 120.0 հազար դրամ, և այն հաստատել 1080.0 հազար դրամ:

2/ Համայնքի սոցիալական պաշտպանության ծախսերի նախահաշվի /խումբ 10.7.1/ այլ նպաստներ բյուռեից 4729 հոդվածին ավելացնել 120.0 հազար դրամ, և այն հաստատել 820.0 հազար դրամ:

| ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ | | | | |
|---|---|---|---|---|
| Տողի N | Ծախսերի անվանումները | նախ. ցուցա-նիշները | նախ. կատարված փոփոխութ-յունները | Սույն նախ. հաստատվող ցուցանիշները |
| | **Սոցիալական պաշտպանություն** | | | |
| **10.3.1** | **4112 – Հուղարկավորության նպաստներ** | **12000.0** | **-120.0** | **1080.0** |
| **10.7.1** | **4729 – Այլ նպաստներ բյուջեից** | **700.0** | **+120.0** | **820.0** |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 26

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել Դդմաշեն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի՝ գ. Դդմաշեն <<Դոմիկ>> 2/2 հասցեի 05-030-0285-0004 կադաստրային ծածկագրով 2338 քմ /0.2338 հա/ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 520.000 /հինգ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

2. Հանձնարարել Դդմաշեն համայնքի ղեկավարին - օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցկացնել հողամասերի աժուրդ-վաճառք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 27

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի № 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> № 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի № 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2017թ. №3 դրական եզրակացությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 05-030-0274-0058 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.389 հա վարելահողը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորեա՝ համաձայն գլխավոր հատակագծի, ենթակայանի կառուցման համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղական համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 28

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով են դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Դրաստամատ Հարությունի Գալստյանը, Ալեքսեյ Դաշկովի Վարդանյանը և Գեղեցիկ Ցոլակի Գևոգյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումների հիման վրա քաղաքացիների տնտեսություններում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.

1/ Դրաստամատ Հարությունի Գալստյանին – 20.000 /քսան հազար/ դրամ,

2/ Ալեքսեյ Դաշկովի Վարդանյանին – 20.000 /քսան հազար/ դրամ,

3/ Գեղեցիկ Ցոլակի Գևոգյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ

**ԸՆԴԱՄԵՆԸ - 70.000 /յոթանասուն հազար/ դրամ**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 29

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-030-0241-0005 կադաստրային ծածկագրով հողամասից <<ՀԷՑ>> ՓԲԸ-ին լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան տեղադրելու համար հատկացնել 20 քմ հողամաս:

2. Հողամասի վարձավճար սահմանել ամսեկան 1 քմ-ի համար 250 ՀՀ դրամ:

3. Առաջարկել Դդմաշեն համայնքի ղեկավարին - իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Կիրակոսյան Հրահատ

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30 - Ն

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2019թ. տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի վարչական բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ գյուղապետարանի ապարատի էներգետիկ ծառայությունների 4212 հոդվածից պակասեցնել 260.0 հազար դրամ, և այն հաստատել 3240.0 հազար դրամ:

2/ Համայնքի վարչական բյուջեի հանգիստ, մշակույթ, կրոն ծախսերի նախահաշվի /խումբ 08.2.7/ հուշարձանների մշակութային արժեքների վերանորոգման և պահպանման 4241 հոդվածին ավելացնել 110.0 հազար դրամ, և այն հաստատել 110.0 հազար դրամ:

3/ Համայնքի վարչական բյուջեի նախադպրոցական կրթության ծախսերի նախահաշվի /խումբ 09.1.1/ սուբսիդիաների 4511 հոդվածից պակասեցնել 1.748.000 դրամ, և այն հաստատել 16.648.630 դրամ:

4/ Համայնքի վարչական բյուջեի հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի ծախսերի նախահաշվի /խումբ 11.1.2/ պահուստային ֆոնդի 4891 հոդվածին ավելացնել 1.898.000 դրամ, և այն հաստատել 3.280.000 դրամ:

5/ Համայնքի վարչական բյուջեի հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի ծախսերի նախահաշվի /խումբ 11.1.2/ պահուստային ֆոնդի 4891 հոդվածից պակասեցնել 3.280.000 դրամ, և այն հաստատել 0 դրամ:

| ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ | | | | |
|---|---|---|---|---|
| Տողի N | Ծախսերի անվանումները | նախ. ցուցա-նիշները | նախ. կատարված փոփոխութ-յունները | Սույն նախ. հաստատվող ցուցանիշները |
| 01.1.1 | **Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում** | **31631.0** | **-260.0** | **31371.0** |
| | 4212 - Գյուղապետարանի ապարատի էներգետիկ ծառայություններ | **3500.0** | **-260.0** | **3240.0** |
| **08.2.7** | **Հանգիստ, մշակույթ, կրոն** | | | |
| | 4241 - Հուշարձանների մշակութային արժեքների վերանորոգում և պահպանում | - | **+110.0** | **110.0** |
| **09.1.1** | **Նախադպրոցական կրթություն** | **18396.6** | **-1748.0** | **16648.6** |
| | 4511 - Սուբսիդիաներ | **18396.6** | **-1748.0** | **16648.6** |
| **11.1.2** | **Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ** | **1382.0** | **+1898.0** | **3280.0** |
| | 4891 - Պահուստային ֆոնդ | **1382.0** | **+1898.0** | **3280.0** |
| **11.1.2** | **Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ** | **3280.0** | **-3280.0** | **0** |
| | 4891 - Պահուստային ֆոնդ | **3280.0** | **-3280.0** | **0** |

2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարել հատկացում՝ 3.280.000 դրամ

2/ Համայնքի ֆոնդային բյուջեի եկամտային մասը հաստատել 19.862.903 դրամ, ներառյալ՝ Հողի օտարումից մուտքեր՝ 1.015.395 դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31 - Ն

## 2020Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանու հաստատմանն է ներկայացվում Դդմաշեն համայնքի 2020թ. տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանչորս հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ հարյուր հիսուն դրամ,

12) Համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատար-ման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ.

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում քսան հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշման 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել 0.3 գործակցի կիրառմամբ:

3. Դդմաշեն համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ երկու հազար դրամ.

2) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսուն ՀՀ դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ ՀՀ դրամ:

3) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն ՀՀ դրամ.

բ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ ՀՀ դրամ.

գ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք ՀՀ դրամ.

դ. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ ՀՀ դրամ.

ե. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի «ա.», «բ.», «գ.» և «դ.» կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի «ա.», «բ.», «գ.» և «դ.» կետերով սահմանված դրույքաչափով.

զ. շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի «ա.», «բ.», «գ.» և «դ.» կետերով սահմանված դրույքաչափով:

4. Սույն որոշման 3-րդ մասի 3-րդ ենթակետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020Թ. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը սահմանվում է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի ղեկավարի 2020թ. աշխատավարձի դրույքաչափը սահմանել 340.000 /երեք հարյուր քառասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԴԴՄԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ ավագանու հաստատմանն է ներկայացվում համայնքապետարանի աշխատակազմի և «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 27-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն որոշմամբ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Դդմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև համայնքային ծառայողներին շնորհված ավելի բարձր դասային աստիճանի համար օրենքով սահմանված կարգով տրամադրվող հավելավճարները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Դդմաշեն համայնքի ավագանու 2018թ. հոկտեմբերի 30-ի թիվ 34 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34

## 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ավագանու հաստատմանն է ներկայացնում 2020թ. տարեկան բյուջեի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1. Հաստատել Դդմաշեն համայնքի 2020թ. տեղական բյուջեի նախագիծը՝**

Եկամուտների մասով – 70000.0 հազար դրամ
Ծախսային մասով – 76250.0 հազար դրամ
Դեֆիցիտը – 6250.0 հազար դրամ

1.1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը գումարով 6250.0 հազար դրամ ուղղել 2019 թ. համայնքի ֆոնդային բյուջեի դեֆիցիտի ծածկմանը:

**2. Հաստատել տեղական բյուջեի նախագիծը վարչական մասով՝**

Եկամուտների մասով – 70000.0 հազար դրամ
Ծախսային մասով – 70000.0 հազար դրամ

**3. Հաստատել ֆոնդային բյուջեի նախագիծը՝**

Եկամուտների մասով – 0 դրամ
Ծախսային մասով – 6250.0 հազար դրամ
Դեֆիցիտը – 6250.0 հազար դրամ

### Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ

| ՏՈՂԻ N | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | ԸՆԴԱՄԵՆԸ /հազ. դրամ/ |
|---|---|---|
| 1000 | Ընդամենը եկամուտներ /Վարչական բյուջե/ | 70000.0 |

| | | |
|---|---|---|
| **1100** | **1. Հարկեր և տուրքեր** | **17002.9** |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝ | 9006.9 |
| 1111 | Գույքահարկ՝ համայքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 127.9 |
| 1112 | Հողի հարկ՝ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 8879.0 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ | 7696.0 |
| 1121 | Գույքահարկ՝ փոխադրամիջոցների համար | 7696.0 |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործնեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝ | 300.0 |
| 1131 | Տեղական տուրքեր | 300.0 |
| 1132 | ա/ Համայքի տարածքում նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարություն /տեղադրման/ թույլտվության համար, այդ թվում՝ | - |
| 1133 | ա/ հիմնական շինությունների համար | - |
| 1136 | բ/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | - |
| 1137 | գ/ Համայքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտության համար | 100.0 |
| 1139 | դ/ Համայնքի տարածքում հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | 200.0 |
| **1200** | **2. Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝** | **49697.1** |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝ | 49697.1 |
| 1251 | ա/ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 49697.1 |
| 1257 | գ/ Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ | - |
| **1300** | **3. Այլ եկամուտներ, այդ թվում՝** | **3300.0** |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝ | 1000.0 |
| 1331 | Համայքի սեփականություն համարվող հողերի վարձակալությունից վարձավճարներ | 1000.0 |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | - |
| 1340 | 3.4 Համայքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | - |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | - |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, այդ թվում՝ | 2300.0 |
| 1351 | Տեղական վճարներ, այդ թվում՝ | |
| | մրցույթների աճուրդների մասնակցության վճար | - |
| 1353 | Աղբահանության վճար | 2300.0 |
| | **Բ.Ֆոնդային բյուջեի եկամուտներ** | **-** |
| | ն/թ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում | - |

## Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

| Գործ. Դաս. | Բյուջետային ծախսերի անվանումները | հազ. դրամ |
|---|---|---|
| **խումբ. ենթախ** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **70000.0** |
| **01.1.0** | **1.Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում. Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ. Արտաքին հարաբերություններ** | **34315** |
| | որից՝ | |
| **01.1.1** | **Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում** | **34315** |
| | այդ թվում՝ | |
| | 4111 – Աշխատավարձ | 25680.0 |
| | 4112 – Պարգևավճար | - |

| | | |
|---|---|---|
| | 4211 – Գործառնական և բանկային ծառայություններ | 50.0 |
| | 4212 – Էներգետիկ ծառայություն | 4000.0 |
| | 4214 – Կապի ծառայություն | 64.0 |
| | 4215 – Ապահովագրական ծախսեր | 45.0 |
| | 4221 – Ներքին գործուղումներ | 200.0 |
| | 4232 – Համակարգչային ծառայություններ | 270.0 |
| | 4234 – Տեղեկատվական ծառայություններ | 306.0 |
| | 4235 – Կառավարչական ծառայություն | 600.0 |
| | 4241 – Մասնագիտական ծառայություններ | 200.0 |
| | 4252 – Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 600.0 |
| | 4261 – Գրասենյակային նյութեր և հագուստ | 400.0 |
| | 4264 – Տրանսպորտային նյութեր | 500.0 |
| | 4267 – Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 500.0 |
| | 4269 –Հատուկ նպատակային նյութեր | 300.0 |
| | 4823 – Պարտադիր վճարներ | 600.0 |
| **01.6.1** | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերի չպատկանող/, այդ թվում՝** | **2350.0** |
| | 4234 – Տեղեկատվական ծառայություններ | 500.0 |
| | 4235 – Իրավաբանական ծառայություն | 400.0 |
| | 4241 – Մանագիտական ծառայություններ | 200.0 |
| | 4261 – Գրասենյակային նյութեր և հագուստ | 450.0 |
| | 4269 – Հատուկ նպատակային նյութեր | 800.0 |
| **04.5.1** | **Ճանապարհային տրանսպորտ, այդ թվում՝** | **1800.0** |
| | 4251 – Ներհամայնքային ճանապարհի ընթացիկ վերանորոգում | 900.0 |
| | 4264 – Դիզելային վառելիք | 900.0 |
| **05.0.0** | **Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝** | **4000.0** |
| | Աղբահեռացում, որից՝ | |
| 05.1.1. | 4213 – Աղբահեռացում /սանիտարական մաքրում/ | 2300.0 |
| 05.2.1 | 4213 – Կեղտաջրերի հեռացում | 900.0 |
| 05.3.1 | 4213 – Սանիտարական մաքրում | 800.0 |
| **06.0.0** | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում՝** | **1400.0** |
| | Ջրամատակարարում, որից՝ | |
| 06.3.1 | 4251 – Ջրամատակարարման ցանցի ընթացիկ վերանորոգում | 900.0 |
| 06.4.1 | Փողոցային լուսավորության ցանցի պահպանում, այդ թվում՝ | |
| | 4269 – Հատուկ նպատակային նյութեր | 500.0 |
| **08.0.0** | **Հանգիստ, մշակույթ և կրոն, այդ թվում՝** | **1930.0** |
| | Մշակութային տներ և ակումբներ | |
| 08.2.3 | 4267 - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 600.0 |
| 08.2.3 | 4269 – Հատուկ նպատակային նյութեր | 1200.0 |
| | | |
| | Քաղաքական կուսակցություններ, Հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ | |
| 08.4.2 | 4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին /հասարակական կազմակերպություններ, արհմիություններ/ | 130.0 |
| **09.1.0** | **Նախադպրոցական կրթություն, այդ թվում՝** | **19600.0** |
| 09.1.1 | 4511 – Սուբսիդիաներ «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 19600.0 |
| **10.0.0** | **Սոցիալական պաշտպանություն, այդ թվում՝** | **2000.0** |
| 10.3.1 | 4726 – Հուղարկավորության նպաստներ | 1200.0 |
| 10.4.1 | 4722 – Մայրության նպաստներ | - |
| 10.7.1 | 4729 – Այլ նպաստներ բյուջեից | 800.0 |
| **11.1.2** | **Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ, այդ թվում՝** | **2605.0** |
| | համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատ հատկացումներ | - |
| | **Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր** | **6250.0** |
| | **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն** | **6250.0** |
| | | |

| | | |
|---|---|---|
| 01.6.1 | 5122- Վարչական սարքավորումներ | 500.0 |
| 01.1.1 | 5129 – Այլ մեքենաներ և սարքավորումներ | 200.0 |
| 06.4.1 | 5129 – Այլ մեքենաներ և սարքավորումներ | 961.0 |
| 01.6.1 | 5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում /Արարողությունների սրահի/ | 3589.0 |
| 01.5.1 | 5133 –Ագրոքիմիական ծառայություն | 100.0 |
| 01.6.1 | 5134- Նախագծահետազոտական ծախսեր | 900.0 |

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Թադևոսյան Գառնիկ

3. Հովհաննիսյան Գուրգեն

4. Մելքոնյան Զավեն

5. Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2008-2019Թ.Թ. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ, ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ, ԱՐՈՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ 2020-2024 Թ.Թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԻ ԵՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել համայնքի 2008-2019թ.թ. հողի հարկի ապառքների 2020-2024թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2020թ. - 1200.0
2021թ. - 1800.0
2022թ. - 2500.0
2023թ. - 2700.0
2024թ. - 2914.1
**ԸՆԴԱՄԵՆԸ – 11114.1 հազար դրամ**

2. Հաստատել համայնքի գույքահարկի ապառքների 2020-2024թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2020թ. - 600.0
2021թ. - 2020.0
2022թ. - 2020.0
2023թ. - 2020.0
2024թ. - 2025.9
**ԸՆԴԱՄԵՆԸ – 8685.9 հազար դրամ**

3. Հաստատել համայնքի արոտների վարձավճարի ապառքների 2020-2024թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2020թ. – 100.0
**ԸՆԴԱՄԵՆԸ – 100.0 հազար դրամ**

4. Հաստատել Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկի ապառքների 2020-2024թ.թ. բյուջետային տարիների ընթացքում մարման ժամանակացույցը /հազար դրամներով/.

2020թ. – 31.9
2021թ. – 131.0
2022թ. – 131.0
2023թ. – 131.0
2024թ. – 131.8
**ԸՆԴԱՄԵՆԸ – 556.7 հազար դրամ**

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադրոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ավագանու անդամներին ներկայացվեց համայնքի ավագանու կանոնակարգի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 41 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշումով հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 12-րդ և 14-րդ կետերի պահանջները և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Դդմաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը.

| | |
|---|---|
| Ավետիս Ավետիսյան - | համայնքի ղեկավար – հանձնաժողովի նախագահ |
| Գարիկ Ներսիսյան - | աշխատակազմի քարտուղար – հանձնաժողովի քարտուղար |
| Կորյուն Մանուկյան – | համայնքի ղեկավարի տեղակալ – հանձնաժողովի անդամ |
| Ֆլորա Գրիգորյան - | գրադարանի վարիչ - հանձնաժողովի անդամ |
| Սեդրակ Գալստյան - | «Դդմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն - հանձնաժողովի անդամ |
| Աշոտ Մկրտչյան – | «Դդմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժ - հանձնաժողովի անդամ |
| Կարինե Գևորգյան - | «Դդմաշենի ԲԱ» ՓԲԸ տնօրեն, բժշկուհի – հանձնաժողովի անդամ |
| Գառնիկ Թադևոսյան - | համայնքի ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ |
| Ժաննա Սարգսյան - | համայնքի ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ |

2. Ուժը կորցրած ճանաչել Դդմաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 41 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 38

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դդմաշեն համայնքի ավագանու ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ 22-րդ և 23-րդ կետերի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ստեղծել համայնքի ավագանու գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ հետևյալ կազմով.

1/ Ռադիկ Մանուկյան
2/ Էդիկ Ղարիբյան
3/ Ժաննա Սարգսյան

2. Ստեղծել համայնքի ավագանու սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ հետևյալ կազմով.

1/ Տիգրան Ավետիսյան
2/ Գառնիկ Թադևոսյան
3/ Գուրգեն Հովհաննիսյան

3. Ստեղծել համայնքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ հետևյալ կազմով.

1/ Գուրգեն Հովհաննիսյան
2/ Զավեն Մելքոնյան
3/ Ժաննա Սարգսյան

4. Ստեղծել համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ հետևյալ կազմով.

1/ Տիգրան Ավետիսյան
2/ Ռադիկ Մանուկյան
3/ Գուրգեն Հովհաննիսյան

5. Ստեղծել համայնքի ավագանու ենթակառուցվածքների նառնչվող հարցերի մշտական հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ հետևյալ կազմով.

1/ Գառնիկ Թադևոսյան
2/ Էդիկ Ղարիբյան
3/ Զավեն Մելքոնյան

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 39

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դդմաշեն համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 57 որոշմամբ համայնքապետարանում, կուլտուրայի տանը, գրադարանում և մանկապարտեզում կատարվել է գույքագրում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Դդմաշեն համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ ցուցակը կցվում է:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 40

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով է դիմել Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչ Բենիկ Վլադիմիրի Սաֆարյանը:

Համայնքի ավագանու սոցիալական հարցերի հանձնաժողովը գրավոր դիմումի հիման վրա քաղաքացու տնտեսությունում կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է եզրակացություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով բնակիչ Բենիկ Վլադիմիրի Սաֆարյանին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.7.1/ 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն – 20.000 /քսան հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝** **Ավետիս Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 41

## «ԴԴՄԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ելնելով ստեղծված իրավիճակից և հաշվի առնելով համայնքապետարանի ֆինանսական հնարավորությունները՝ ժամանակավորապես՝ 2019 թվականի հունվար և փետրվար ամիսներին, ժամանակավորապես դադարեցնել «Դդմաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /ՀՈԱԿ/ գործունեությունը:

2. «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ գործունեությունը վերսկսել 2020 թվականի մարտի 1-ից:

3. «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին - ֆինանսական նպատակահարմարությունից ելնելով «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ աշխատողների հասանելիք 2020 թվականի հերթական արձակուրդները տրամադրել 2020 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում՝ ըստ ցանկության, այնուհետև՝ վճարել պարապուրդի համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**